

ՀԱՅ ԱԶԳԻ ԻՂՁԵՐԸ

II.

Մի երկու տարի սրանից առաջ մենք «Մշակ» լրագրի մէջ մի յօդուած տպագրեցինք «Մօտակայ Արեւելի ապագան» վերնագրով: Այդ ժամանակ դեռ հալածանքը հայերի դէմ շատ սաստիկ էր և շնայելով դրան, մենք պնդում էինք թէ շատ շուտով մօտակայ Արեւելի վերաբերմամբ Ռուսաստանի քաղաքականութիւնը պիտի փոխուի, որպէս և հայերի նկատմամբ այդ քաղաքականութիւնը անպատճառ պիտի բարեհաճ դառնայ: Այն ժամանակ մենք գուշակում էինք եւրոպական մամուլի մէջ երեւցող փաստերի հիման վերայ, իսկ փաստերը տիրաբար համոզում էին մեզ, որ Գերմանիայի զօրեղանալը Թուրքիայում կատարւում է ի վնաս Ֆրանսիական և Ռուսիայի ազդեցութեան, ուրեմն այս իրողութիւններն առանց դիմադրութեան չէին կարող մնալ:

Իայց չէ որ յայտնի է, թէ Թուրքիայում հայկական կոտորածները սաստկացան և սիստեմատիկայի վերածուեցին Գերմանիայի ազդեցութեան զօրեղանալու հետ զուգընթացաբար: Արդէն 1895 թուականին Թուրքիան ամրապնդել էր մի կողմից իւր բարեկամութիւնը Գերմանիայի հետ և միւս կողմից կարողացել էր Կովկասեան հայութեան դէմ յաջող ինտրիգներ լարել: Կոտորածները այս թուին էլ սկսուեցին և մնացին առանց հետեւանքի Գերմանիայի զօրեղ պաշտպանութեան շնորհիւ: Մինչև Գերմանիայի բարեկամութիւնը Սուլթանը ակնա-

ծում էր Ռուսաստանից և սիստեմատիքական հայկական կոտորածներ սարքելու մասին չէր մտածում: Ռուսաստանն էլ մինչև 1895 թուականը դեռ չէր հիմնական կերպով շեղուել Պետրոս Մեծի դժադրած ճանապարհից մոտակայ Արևելքի վերաբերմամբ, այսինքն դեռ էլի իւր սեպուհ պարտականութիւնն էր համարում մերձակայ Արևելքի քրիստոնեաների պաշտպանութեան դերը ձեռքից բաց չլծողներ:

Թէ որքան կորստաբեր եղաւ Ռուսաստանի քաղաքանութեան շեղումը իւր աւանդական շաւղից մեղ համար թէ Թուրքիայում և թէ Կովկասում, այս շատ յայտնի է արդէն: Անցեալ տարուանից Ռուսաստանի ներքին վերանորոգման յոյսերը կենդանացան և պետութեան ոչ միայն բոլոր ազգերը, այլև նոյն իսկ ժողովրդի զանազան դասակարգերը հնարաւորութիւն ունեցան իրենց իղձերը և ցանկալիքը արտայայտելու: Հայերն էլ էլ իրենց պետիցիան կազմեցին զանազան քաղաքներում, իսկ Երևանի քաղաքային վարչութեան մէջ նոյն իսկ քաղաքացիական պսակի և ազատ կենակցութեան խնդիրներ դրուեցին և խելօք երևանցիք այս կէտն էլ մրտցրին իրենց քաղաքական իդէալների մէջ: Երևի վերջին տարիներում օրինաւոր պսակների թիւը Երևան շատ էր պակասել):

Զանազան քաղաքներ սակայն չնայելով հայերի մէջ դոյութիւն ունեցող սնափառութեան, այս անգամ մի փոքր աւելի հաւաքական խելք ցոյց տուին քան թէ սովորաբար ունին: Ռուսաստանի շատ տարրեր երևակայեցին, որ եթէ Ռուսաստանի վերջը արդէն չէ հասել այսօր, ուրեմն ամենաշատը երկու օրից յետոյ պիտի լինի: Այս պլանով ձևում էին իրենց իղձերը: Կապրենք ի հարկէ, կտեսնենք: Հայերը, ասում եմ, ներկայացրին շատ քիչ պահանջներ, այսինքն այն, ինչոր հայր դարերի ընթացքում է խնդրում ու պահանջում, այսինքն խաղաղ կուլտուրական կեանքի համար արդար հասարա-

կական պայմաններու «Լուսնայ» ամսագրի Մայիսի համարում մենք մի յօդուածով ապացուցեցինք, որ հայերը իրենց բնակութեան տեղի առանձնայատկութիւնների և այլ պատմական ֆակտորների շնորհիւ եղել են և են Ռուսաստանի բնական բարեկամը և դաշնակիցը և որ հակառակ յարաբերութիւնները հակապատմական են և անորմալ։ Նոյն յօդուածում մենք մեր հասկացութեան չափով դժագրել էինք այն իղձերը, որ կարող է տածել Կովկասեան հայութեան մեծամասնութիւնը և թէ կամենաք ահագին մեծամասնութիւնը։ Բազու հրատարակուող յառաջագիմական «Бакы» լրագիրը կարևոր համարեց թարգմանել այդ յօդուածից քաղուածներ և իւր № 62-ում հրատարակեց մեր յօդուածը մի բանասիրականով և մի խմբագրական ծանօթութեամբ, թէ հայ հասարակութեան մէջ կան տարրեր, որ աւելի լայն են հասկանում հայ ժողովրդի շահերը քան թէ մենք։ Մի կողմ թողնելով այն փոքրածիւ տարրերը, որոնք բարոյեցով Կովկասեան ազգերի համերաշխութիւն՝ չեն կամենում հասկանալ, որ մեր դրացիք մեզանից պահանջում են եղբայրութեան համար մի կարևոր պայման՝ այսինքն՝ որ մեր գրպանն էլ նրանցը լինի, իսկ իրենց գրպանն էլ իրենցն է ու իրենցը, մենք դառնում ենք մեր յայտնած սկզբունքներին, որոնք հայ ժողովրդի ճշդ բաղմութեան ձգտումների արտայայտութիւնն են, որպէս մենք մեր աչքով ականատես եղանք հայաշատ դաւառներում դժբաղդների վերաբացման առիթով կատարուած մաղթանքների ժամանակ։ Այս մասին «Разсветъ» լրագրի այս տարուայ 163 համարում տպագրուած առաջնորդող բոլորովին ճշգրիտ կերպով է նկարագրում հայ ժողովրդական գոհունակութիւնը դպրոցների բացման առիթով, և սա ապացոյց է թէ որքան հայ տարբեր խտաբէտ է։ Մենք և մեզ տիրողները պիտի կարողանանք ըմբռնել ազգի իսկական յատկութիւնները և ջոկելու մեծամասնութեան ձգտումները ան-

հատների և փոքրամասնութեան ձգտումներից:

«Լուսալի» մէջ մենք դժագործել էինք հայ ազգի իղձերի դիւսաւորները: Օգոստոս ամսի մէկին հրատարակուած բարձրագոյն հրովարտակով այդ իղձերից մի քանիսը գոհացում են ստացել: Եկեղեցական կալուածների վերադարձնելը և դպրոցական յայտնի ինքնավարութեան ճանաչումը արդէն ապացոյց են, որ մեր իղձերը կատարուելու վերայ են: Մենք ասել էինք, որ թիւրքահայոց վիճակի բարւոքումն էլ մենք Ռուսաստանից ենք սպասում: Այժմ մենք ոչ միայն նոյնը պնդում ենք, այլ պատմական փաստերի հիման վերայ համոզուած ենք, որ վերանորոգուած Ռուսաստանը արտաքին քաղաքականութեան շրջանում անխուսափելի կերպով պիտի վերադառնայ այս խնդրում ազատարար Կայսեր Ալէքսանդր երկրորդի ձգտումներին և հայկական խնդրի լուծումը իւր ձեռքը պիտի վերցնի:

Մնում է մեզ կատարուած տեսնել Լուսաւորչական եկեղեցու վարչական ինքնավարութիւնը վերականգնուած և հայ գիւղացու անտեսական վիճակը բարւոքուած: Եկեղեցական ինքնավարութեան խնդիրը ոչ մի արգելքի հարկէ հանդիպել չի կարող, իսկ հայ գիւղացու տնտեսական վիճակի բարւոքումը պահանջում է շուտափոյթ և լուրջ կարգադրութիւններ: Այս խնդիրը այնքան ծանրակշիռ է և պետական այն մեծ արժէք ունեցող գործն է, որ մի քանի խօսք աւելորդ չենք համարում ասել այդ մասին:

Հարցը նրանումն է, որ Անդրկովկասը ռուսների ձեռքը անցած օրից մինչև այժմ հայ գիւղացին իւր հայրենի երկրում ոչ մի վերշուկ նոր հող չէ ստացել, իսկ ազգաբնակութիւնը աճել է մի քանի անգամ: Այս խնդրի վերաբերմամբ եղած գրականութեան հետ թէև մասնագիտական ծանօթութիւն չունինք, բայց 1899 թուականին պ. Ս. Զաւարեանի մի աշխատութիւնը, որ կրում է «Опытъ изслѣдованія сельскаго хозяйства

хлѣбороднаго района Эриванской губерніи и Карсской области» վերնագիրը, շատ բան է պարզում: Նախ այս դիրքը ապացուցանում է, որ հայ գիւղացին շատ աշխատասէր է և շատ համբերատար: Այն սոսկալի դժուարութիւնները, որ կրում է հայը իւր օրուայ հացը վաստակելու համար, վաղուց ուժասպառ կանէին ամեն մի ուրիշ ցեղ, որ իսպառ աղքատացած և միևնոյն ժամանակ անբարոյականացած կլինէր: Այսպէս 1894 թուին Ղարսի շրջանում ամենաշատ հող ունեցող գիւղերում ամեն մի մարդուն ընկնում էր 1,97 դէսետաին և 0,15 դէսետաին վարելահող և արօտատեղի, իսկ սակաւահող տեղերում հաղիւ մէկ դէսետաին, Աղէքսանդրապօլի գաւառում ամեն մի հողուն (նաֆար) նոյն ժամանակ ընկնում էր ամենաշատը 1,47 դէսետաին, իսկ ամենաքիչը 0,54 դէսետաին, Էջմիածնի գաւառում մէկ դէսետաինից էլ պակաս — 0,78 ամենաշատ հող ունեցող գիւղերում և սակաւահող տեղերում հաղիւ 0,57 դէսետաին, Երևանի գաւառում ամենաշատը 0,96 դէսետաին, իսկ ամենաքիչը 0,43 դէսետաին, Նոր-Բայազետ կան տեղեր, ուր ամեն մի նաֆարին հաղիւ 0,17 դէսետաին հող է ընկնում: Նոյն դրքից երևում է, որ 1894 թուականին Ղարսի շրջանում մարդագլուխ ցանւում էր հաղիւ 0,45 դէսետաին հող կամ ամեն մի հողու համար տարեկան հաղիւ 5,6 փութ սերմ, Աղէքսանդրապօլի գաւառում 0,26 դէսետաին կամ ամեն մի հողու համար 3,1 փութ, Էջմիածնի գաւառում 0,22 դէսետաին կամ 2,6 փութ, Երևանում 0,22 դէսետաին կամ 2,6 փութ, Նոր-Բայազետում 0,25 դէսետաին կամ 2,9 փութ սերմ:

Տեղական ժողովրդի կարծիքով ամեն մի գիւղացի տարեկան ուտում է 15 փութ հաց, իսկ ուսումնասիրութիւնից երևում է, որ Երևանի նահանգի լեռնային մասերում հողը տալիս է մարդագլուխ միմիայն $12\frac{1}{2}$ փութ, իսկ անբարեբեր տարիներում հաղիւ 9 փութ: Նոյն դրը-

քում ժողոված թուերից երևում է, որ Աղէքսանդրապոլի և Նոր-Բայազէթի գաւառներում բնակչութիւնը նոյնպէս խիտ է, որպէս և կենդրոնական, այսպէս ասած, Ռուսաստանի սեւահող բաժնում և արեւմտեան նահանգներում և տասն անգամ աւելի խիտ է քան թէ հարաւային Ռուսաստանի տափարակներում: Իսկ եթէ ի նկատի առնենք, որ տարեկան հազարաւոր հոգի գաղթում են Ռուսաստանից նոր տեղեր և կառավարութիւնը այս մասին հոգս է անում, իսկ հայ գիւղացին գաղթելու տեղ չունի և մինչև այսօր նրան մի ոտնաչափ հող չեն տալիս, եթէ մինչև անգամ հէնց նոյն հայրենի երկրում ազատ հողեր էլ կան—այն ժամանակ մեզ համար պարզ կլինի նախկին վարչական սիստեմի անարդարութիւնը և հակապետական ուղղութիւնը: Սոված ստամոքսի տէրը օրէնք կատարելու և հնազանդ մնալու մասին մտածելու հնարաւորութիւնից զրկուած է լինում:

Վերև բերած մի քանի տողը բոլորովին բաւական ենք համարում պատկերացնելու մի կողմից հայ ժողովրդի տոկունութիւնը և համբերատարութիւնը, իսկ միւս կողմից այս թուերը յայտնի չափով պարզում են մեզ վերջին տարիների դժգոհութեան գաղտնիքների դըլխաւորը:

Տնտեսապէս ճնշուած և սոված ժողովրդի մէջ ամեն տեսակ խլրտմունք և շարժում շատ շուտ է արձագանք գտնում, ուստի և ժողովրդի տնտեսական վիճակը ամենակարճ միջոցում և շուտափոյթ կարգադրութիւններով բարելաւելը վարչական իմաստութեան նշան կլինի: Այս պատճառով անհրաժեշտ է, որ շատ շուտով երևանի նահանգի ազատ հողերը անմիջապէս բաժանուին երկրի սակաւահող գիւղացիներին:

Այս կարիքների շուտափոյթ գոհացումը պէտք է կարծել, որ մեծապէս կնպաստէ երկրի խաղաղութեան գործին:

ԳԱՐ. ՆՆԳԻԲԱՐԵԱՆ